

ԱՌԱՎՆ ԻՐԻԵՎ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱԴՈՅԱՆ

Միջին դարերի գեղարվեստական գրականությունների ամենաբնորոշ հատկանիշը թերևս ուսուցական-խրատական ուղղությունն է, հանգամանք, որ մեծապես նպաստել է տարբեր ժողովուրդների մշակույթների փոխներթափանցմանն ու դյուրին հաղորդակցմանը:

Բանասիրությանը հայտնի են հազարավոր դիպաշարեր ու մոտիվներ, որ «թափառում» են գրականությունից գրականություն, երկրից երկիր, տարածվելով Հնդկաստանից մինչև Արևմտյան Եվրոպա: Այդ պարագային, ինչպես ցույց է տվել Նիկողայոս Մառը, երկրորդական չէ հայոց ներդրումը: Գրական փոխառնչություններից զատ կարևոր է հատկապես այս կարգի բնագրերի հասարակական-դաստիարակչական դերի ուսումնասիրությունը՝ զուգահեռաբար հաշվի առնելով գրականության զարգացման մյուս գործոնների առկայությունը:

Այս առումով գրական մյուս տեսակներից ավելի հետաքրքիր է առակի ժանրը: «Նոր Հայկազեան բառգրքում»¹ առակը բնութագրվում է այսպես. «Առած նմանաբանական կամ այլաբանական, բան ինչ ի մէջ առեալ ի նշանակել զայլ ինչ. խորհրդաւոր նմանութիւն. և պատմութիւն, առեղծուած կամ առասպել յարմարեալ ի խրատ կամ ի զարթուցանել զլսելիս առ ի քննել զգաղտութիւն իրաց»: Ըստ այսմ, ժանրի նպատակն է խրատել, հետաքրքրություն առաջացնել ներկայացվող երևույթի, առարկայի, իրավիճակի, դեպքի նկատմամբ: Ժանրի այժմյան սահմանումը շատ տարբեր չէ միջնադարյանից: Դա փոքրածավալ գեղարվեստական (արձակ կամ չափածո) ստեղծագործություն է, որ ունի դաստիարակչական, բարոյախոսական, խրատական բովանդակություն:

Ուրեմն, առակ եզրաբառը միջնադարում նշանակում էր նաև առեղծված, հանելուկ: Վարդան Այգեկցու «բարոյական» շարքի առակներից շատերի բարոյախոսականները այլաբանության, առեղծվածի բացատրություն ունեն: «Առիւծ սուտ հիւանդացեալ» հայտնի առակին հաջորդում է հետևյալ բացատրությունը. «Տուցանէ, թէ առիւծն մահն է և քարայրն գերեզմանն է և մեք անմիտք, որ քան զխոզն չեղաք, որ ածեմք զմտաւ, թէ որք մեռան, այլ ոչ կենդանացան և հանապազ ազահիմք»²:

Ակնհայտ է, որ սա նույնպես խրատական, դաստիարակչական միտում ուներ և պակաս ներգործուն չէր իբրև այդպիսին:

Վաղ միջնադարում արդեն Աստվածաշնչից, պարականոն գրականությունից, ժողովրդական բանահյուսությունից, Եզրպոսի, «Բարոյախօսի»

¹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հ. Ա, Եր., 1979, էջ 283:

² Ն. Մառ, ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ., ՍՊԲ., 1894, էջ 3, տես համանման օրինակներ նաև էջ 4, 5 ևն:

ժողովածուներից հայ մատենագրություն են թափանցում բազմաթիվ առակներ ու գրույցներ, որոնց ավելանում են նաև հեղինակային՝ պատմական, ուսուցական, երգիծական բնույթի այլևայլ ստեղծագործություններ:

«Առասպելավարժութիւնը» միջնադարյան Հայոց համալսարաններում, վարդապետարաններում պարտադիր առարկա էր: Առակի նպատակը հասկանալու համար այն մեկնաբանելիս նկատի էր առնվում ճշմարտացիությունը: Առակի բոլոր մասնակի բաղադրամասերը համարվել են «զարդ այլաբանութեան»: Ուշադիր ընթերցողը կամ ունկնդիրը այնտեղից դաս էր քաղում ըստ իր ըմբռնումների, կարողության, զարգացածության աստիճանի: Առասպելավարժությունը աշակերտներին սովորեցնում էր, որ խոսքը հաճելի, հստակ և ազդեցիկ է դառնում, երբ օրինակներն ու համեմատությունները վերցվում են ունկնդրին ծանոթ միջավայրից: Այդ հրապուրիչ ու գործունեղանակն էր բանեցնում Քրիստոս իր աշակերտներին քարոզելիս: Դա առակի օգտագործման ամենակարևոր հանգամանքն է թերևս: Շատ բնորոշ է Վարդան Այգեկցու պարագան, որ հորինում էր առակավոր ճառեր՝ քարոզին տալով գեղարվեստական պաճուճանք, միաժամանակ խրատն ու խորհուրդը դարձնում էր հաճելի:

Առակները, բացի ուսումնական հաստատություններից, օգտագործվում էին ամենօրյա շփումների, խոսքուզրույցի ժամանակ: Հավանաբար դա է նկատի ունեցել Մխիթար Գոշը, երբ իր 190 առակները դասակարգել է այնպես, որ ցանկացած դեպքի վերաբերյալ առակ ընտրելիս իր ժողովածուից օգտվողն ստիպված չլինի կարդալու ամբողջ գիրքը: Այն կազմված է երեք բաժնից. ինչպես դրանք հեղինակն անվանել է՝ բարոյական, ստեղծական և առասպելական: Բաժինների ներսում ևս նկատելի է որոշակի համակարգ. երկնային մարմիններ, երկիր, բուսաշխարհ, բնական միջավայր (լեռներ, գետեր ևն), կենդանական աշխարհ: Սա ևս կարելի է համարել ժողովածու կազմելու ընդհանուր սկզբունք, երբ, ինչպես Աբուլ-Ֆարաջն է արձանագրել, «Յուրաքանչյուր պատում տեղավորված է իր նման պատումի հարևանությամբ»³:

Միևնույն բարոյականը, խրատը կարելի է պարզել տարբեր դեպքերի, դիպաշարի միջոցով:

Ինչպես որ տարբեր առակներ կարող են ունենալ նույն բարոյախոսությունը, այդ կերպ նույն առակը կարող է տարբեր ձեռագիր ժողովածուներում ունենալ տարբեր մեկնություններ, այլևայլ բարոյական խրատներ: Ավելին, երբեմն նույն բնագրին կցված է լինում երկու հետևություն: Օրինակ, «Թագաւորազն այր և լու»⁴ առակը, նախ՝ խրատում է. «Յուցանէ առակս, թէ բնաւ մի առնէր չար ունեք ի կեանս քո», իսկ հետո՝ «Դարձեալ ցուցանէ առակս, թէ պարտ է իշխանաց և թագաւորաց և դատաւորաց՝ զփոքր չարագործն հոգալ և տանջել, որ երկիցեն մեծամեծ չարագործքն»⁵:

Պատահում են առակներ, որ դիպաշարի փոխարեն ունեն որևէ ակնհայտ փաստ կամ երևույթ, և դրանց բարոյականն ավելի ծավալուն է, քան

³ Աբուլ-Ֆարաջ, Հետաքրքրաշարժ պատմությունների գիրք, Եր., 1981, էջ 6:

⁴ Տե՛ս Ն. Մառ, նշվ. աշխ., էջ 119:

⁵ Համանման օրինակներ տե՛ս նաև նույն տեղը, ճԻԸ. «Բեռնակիր անասուն», ՄԾԵ. «Սեր դատեր», էջ 275-276 և այլն:

«բուն» առակը: Օրինակ, «Ձուկն յորժամ ի ջրոյն ի դուրս ելանէ, նա մեռանի» կանխադրույթին հաջորդում է մեկնությունը. «Ցուցանէ, թէ մարդն որ ի պատուիրանացն Աստուծոյ ի դուրս ելանէ, նա մեռանի հոգին և յետ մահուն հոգին և մարմինն տանջի»⁶:

Սույն առակը գեղեցիկ մշակման է ենթարկվել նշանավոր հայրեններից մեկում.

*Ես՝ աչք, ու դուն՝ լոյս հոգի,
Առանց լոյս՝ աչքըն խաւարի,
Ես՝ ձուկ, ու դուն՝ ջուր, հոգի,
Առանց ջուր ձուկըն մեռանի:
Երբ ձուկն ի ջրէն զատի,
Ալվի ջուր ձգեն՝ նայ ապրի,
Երբ զիս ի քէնէ զատից՝
Քանց մեռնիլն այլ ճար չի լինի⁷:*

Տվյալ հատկությունն առակը դարձնում էր բավական հատու զենք բանավիճելիս: Այդ տեսակետից Հին Հունաստանում առակն ամենից առաջ պայքարի միջոց էր, իսկ Արևելքում օգտագործվում էր խրատելու, դաստիարակելու, կենսափորձը սերունդներին, սաներին փախանցելու նպատակով: Ավագները, բնականաբար, կրտսերներին ուղղորդում, մղում էին ցանկալի հունով: Հանգամանք, որի թելադրանքով «թափառիկ սյուժեները» ստանում էին նորանոր մեկնություններ:

Հունաստանում առասպելավարժության ժամերին հանձնարարում էին այս կամ այն նյութով առակ կազմել՝ համապատասխան բարոյախոսությամբ: Ապա դրա բարոյախոսությունը հերքող նոր առակ էին կազմում՝ նպատակ ունենալով ապագա ճարտասանի մեջ ձևավորել հարկ եղած պնդումը հիմնավորող առակ հորինելու կարողություն: Սանը պարտավոր էր ի մտի ունենալ նաև «պատրաստի» առակ, որ նույնպես կարող էր հարմարեցնել քննարկվող նյութին: Միջնադարի հայ իրականության մեջ բանավեճը մեծ մասամբ դավանաբանական բնույթի էր: Հունական մշակույթին լավատեղյակ հայ վարդապետը, ուսուցիչը առասպելավարժության դասաժամերը պիտի կազմակերպեին նույն կերպ՝ սաներին վարժեցնելով ստեղծագործական աշխատանքի, հորինելու կամ պատրաստի դիպաշարին հանձնարարված ուղղություն, պատշաճ մեկնություն տալու կարողություն:

Առակը բանահյուսության եթե ոչ ամենահին, գոնե հնագույն տեսակներից է: Սյուժետավոր պատումը իր գրավչությամբ հետաքրքրել է բոլորին՝ փոքրից մեծը, և ընթերցող ունկնդիրներից յուրաքանչյուրը յուրովի է ընկալել՝ ելնելով իր հետաքրքրություններից, իմացությունից: Անշուշտ, առակի հաջողությանը, տարածմանը մեծապես նպաստել են սեղմ, հակիրճ պատմելու, քիչ խոսքով մեծ բովանդակություն արտահայտելու հատկու-

⁶ Ն. Մառ, նշվ. աշխ., էջ 236, ՍԸ. «Ձուկն»:

⁷ «Հայրեններ», աշխատասիրութեամբ Ա. Շ. Մնացականյանի, Եր., 1995, էջ 45-46: Հմմտ. նաև՝ Ա/Ա 79-86, Ա/ԼԸ 15-20, Ա/ԽԴ 41-48:

թյունը, մտքեր շարժելն ու իմաստուն խորհուրդները: Այստեղ զուգակցվում են երկու նպատակ՝ ժամանց և ուսուցում-խրատ:

Հնուն հեղինակներն ու մանկավարժները մեծ կարևորություն են տվել դպրոցներում աշակերտներին քերականության ու ճարտասանության հետ առասպելավարժություն ուսուցանելուն՝ համարելով, որ դա մեծապես կօգնի մանուկների մտահորիզոնի ընդլայնմանը, կյանքի ճանաչողության խորացմանը, սաների, ունկնդիրների բարոյական կերպարի կայացմանը:

Առակներն անհամեմատ ավելի տարածվում էին բանավոր ճանապարհով, և շատ հաճախ դիպաշարը պատմելուց հետո բարոյականի արտածումը թողնում էին ունկնդրին: Դա, անշուշտ, միտք էր շարժում, ունկնդրին որոշ իմաստով դարձնում էր ստեղծագործության մասնակից: Իսկ եթե վերջինս հասու չէր առակի խորհրդին, բայց անհրաժեշտություն էր զգում իմաստավորելու, տալիս էր հասարակ դարձած հարցը. «Առակս զի՞նչ ցուցանե՞ս»:

Հ. Ղևոնդ Յովնանյանը նկատել է, որ բոլոր ազգերի մեջ «ժողովրդական գրուածոց գլխաւոր և ճոխագոյն նիւթերէն մին է՝ ռամկաց դասը զուարճացնելով կրթելու նպատակով յօրինեալ բարոյական վէպք, որ սովորաբար ի բերան ժողովրդեան պտտելէն և նորանոր կերպարանք ստանալէն ետև՝ ի գիր առնուած կ'ըլլան, բայց կը գտնուին նաև այնպիսիներ, որ առանց այսպիսի շրջանաց՝ պարզապէս իբրև բանաստեղծի մը երևակայութեան ծնունդ, երևան կ'ելլեն: Մեր մատենագրութեան մեջ ևս առատութեամբ իսկ կ'տեսնուին այս կերպ մանր վէպք, որ թեպէտ այլ և այլ տեսակք են, և ըստ զանազանութեան նիւթոյն զատ-զատ անուամբ իրարմէ զանազանելու էին, սակայն առ մեզ սովորական եղած է առհասարակ ամենուն ալ անխտիր առակ կոչումը տալ»⁸:

Առակներն առհասարակ աչքի են ընկնում հենց խոսքի սեղմությամբ, այլևայլ դիպաշարերի արագ ու նպատակասլաց զարգացմամբ և խրատի դյուրընկալելիությամբ, տրամախոսությունների աֆորիստիկ կառույցով:

Տեղական սյուժեների կողքին բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում պատմվել են այսպես կոչված՝ թափառիկ սյուժեներ, որոնք լայն տարածում են գտել Առաջավոր Ասիայում ու հարակից շրջաններում: Առակների նոր հոսք բերեց Ս. Գրքի թարգմանությունը Ե դարում: Աստվածաշնչում և հատկապես Նոր Կտակարանում բազմաթիվ են առակ կոչված պատումները: Դրանց մեջ են մտնում և՛ իրական որոշ պատմություններ ու զրույցներ, և՛ բնությունից վերցրած օրինակներ, որոնք ճշմարտությունը բացահայտում են «խորհրդավոր և այլաբանական առումով»⁹:

Մարգարեները, այնուհետև նաև Քրիստոս, «առակօք» խոսում էին հենց ասելիքը, պատգամը ազդու և ընկալելի դարձնելու նպատակով:

Ինչպես հայտնի է, Աստվածաշնչի զրույց-պատմությունները, առակները կարող են ունենալ երեք նշանակություն՝

ա) տառացի-մարմնական, բ) բարոյական-հոգեկան, գ) միստիկ-հոգևոր: Այս հատկանիշը վերագրելի է և առակներին: Սա արդեն նշանա-

⁸ Հ. Ղ. Յովնանյան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, մասն Ա., Վենետիկ, 1897, էջ 274-275:

⁹ Տե՛ս օր.՝ Մատթէոս, ԺԵ. 15:

կուն է, թե ցանկացած դիպաշար հնարավոր է ընթերցել և ընկալել տարբեր դիտանկյուններից: Ենթակայական ընկալման բերումով է, որ միևնույն առակը կարող է ստանալ տարբեր մեկնաբանություններ: Այսպիսի փաստերը մատենագրության մեջ բազմաթիվ են. հաճախ նույն պատումին տարբեր ձեռագրերում տրվում են տարբեր բացահայտումներ, նույն առակը ստանում է այլևայլ բարոյախոսություններ: Այդպես է, օրինակ, Մխիթար Գոշի «Երեք ուղտ և երեք աղուէք» առակը: Եղբայրացած այս կենդանիները երեք հաց են գտնում, և ուղտերն ուտում են հացը: «Աղուէքն, պատմում է առակախոսը, - լային առ յոտս նոցա, և կոխեալ ըղտուցն՝ սատակեցուցին զնոսա»¹⁰: Ապա բխեցնում է բարոյախոսությունը. «Տուցանէ առակս, թէ մեծատունը ծծեն զըղուղս ժողովրդեան. և շատ պատահի, որ աղքատն ի նեղեալ վիշտացն՝ մեռանի»¹¹: Այս մեկնությունը որոշակի փոփոխությամբ մտել է հնատիպ «Աղուէսագիրք»: Տարբերություններ կան նաև առակի արաբերեն թարգմանության մեջ. «[Առակս] սովորեցնում է մեզ, որ չբարեկամանանք մեզնից առավել ուժեղների հետ, քանի որ ազդեցիկները խժռում են ժողովրդի ուժը, և մարդիկ խիստ աղքատանում են, պարտույթ վճարելով թագավորներին, պետերին ու դատավորներին և բոլոր նրանց, ովքեր նեղում են չքավորներին»¹²:

Ինչպես տեսնում ենք, առակի արաբերենի թարգմանիչը ավելի «մանրացրել է» բարոյականը և թվարկել ժողովրդին կեղեքողներին:

Ընկերային անարդարությունները հասարակության համար մեծ չարիք են, այս համոզման է հանգում Վարդանի՝ չորս տասնյակի հասնող առակների, ինչպես և քարոզների ընթերցողը: Բայց նա բավարար չի համարում անհասցե քննադատությունը, իշխանավորներին հորդորում է մեղմ վերաբերմունք դրսևորել խոնարհ դասի նկատմամբ, իսկ այս դասին խրատում է չհակադրվել, չընդդիմանալ տերերին:

Առավել մեծ գաղափարների քարոզիչ էր Մխիթար Գոշը: Ինչպես «Դատաստանագրքի», նույնպես և առակների մեջ առանցքային նշանակություն ունի կենտրոնացած միապետության գաղափարը: Նրա ըմբռնմամբ՝ պետության համար առանձնապես վտանգավոր երևույթ է իշխանների կենտրոնախույս տրամադրությունը: Թեպետ նա չի անտեսում նաև մարդկային հարաբերությունների, առօրյա կյանքի բազում խնդիրներ:

Վարդան Այգեկցու ասորի ժամանակակիցը՝ **Աբուլ-Ֆարաջը** (1226-1286), ցանկացել է կազմել, ինչպես ինքն է ասում, «միտքը թարմացնող և սրտից թախիծն ու վիշտը վանող զրույցների» մի ժողովածու, որ «սփոփանք լինի տառապյալներին, բուժիչ բալասան կոտրված սրտերին, ուղեցույց՝ խրատ սիրողներին»¹³:

Այս կարգի գործերը միջնադարում բնորոշում էին «հոգեշահ» մակդիրով: Դրանցով հոգևոր գործիչները ցանկալի ուղղություն էին տալիս ժամանցին, այն դարձնում նպատակամետ և իմաստալից, ինչ որ պահանջում էր Ներսես Շնորհալին: Բայց ամենևին պարտադիր չէր (եթե չասենք հնարավոր չէր), որ ժողովածուներում ամփոփված նյութերը միարժեք լինեին:

¹⁰ **Ն. Մառ**, նշվ. աշխ., էջ 192:

¹¹ Ձեռագրական այլ ընթերցումները՝ նույն տեղում:

¹² **Иосиф Орбели**, Басни средневековой Армении, М.-Л., 1956, с. 164.

¹³ **Աբուլ-Ֆարաջ**, նշվ. աշխ., էջ 6:

Հայ բանահյուսության և մատենագրության կարևոր հարստություններից է դարերով կուտակված թարգմանական և ինքնուրույն առակների ամբողջությունը, որ դաստիարակչական անուրանալի դեր է կատարել, կրթել է սերունդներ, ծառայել դպրոցին և հարստացրել մշակույթը:

Ուշ միջնադարում ու նոր շրջանում բանահյուսության ու գրականության մեջ լայն կիրառություն է գտնում չափածո առակը մինչև Սայաթ-Նովա ու Խ. Աբովյան՝ առավել զարգանալով հետագա գրողների ստեղծագործության մեջ:

АСМИК МАДОЯН – Притча как дидактическое произведение. – Одна из основных черт средневековых литератур – это дидактическая, обучающая направленность. Уже в раннем средневековье появились первые армянские переводы библейских притч, апокрифов и басен Эзопа. Позднее к ним примкнули различные авторские произведения исторического, обучающего и сатирического характера. Со временем “Толкование иносказания” стало обязательной дисциплиной в школах и университетах Армении, и жанр притчи получил широкое распространение; к концу средневековья и в новое время поэтическая притча широко вошла как в фольклор, так и в литературу.

HASMIK MADOYAN – Parable as a Didactic Work. – One of the main features in medieval literature is the didactic, educational orientation. Already in the early middle Ages in Armenian literature we can meet the first translations of the parables from the Bible, the Apocrypha, Aesop, which were supported by various historical, training and satirical works. Later, "The interpretation of allegory" became a compulsory subject in schools and universities of Armenia and the genre of parables evolved and spread to almost all the areas of life, so that at the end of the Middle Ages and in the New Period in Armenian folklore and literature in general the poetical parable was already widely used.